«Ինտերակտիվ կրթության զարգացում»

Հերթական ատեստավորման ենթակա ուսուցիչների
վերապատրաստման դասընթաց 2022

Հետազոտական աշխատանք

ԹԵՄԱ՝ «Մեթոդաբանական գիտելիքների և ուսուցման ձևերի կարևորությունը մանկավարժության մեջ»

ԱՌԱՐԿԱ՝ Պատմություն

ՀԵՂԻՆԱԿ՝ Արփինե Մկրտչյան

ՄԱՐԶ՝ Շիրակի մարզ

ՈՒՍՈՒՄՆԱԿԱՆ ՀԱՍՏԱՏՈՒԹՅՈՒՆ՝ «Ֆոտոն վարժարան»

ԵՐԵՎԱՆ-2022

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹՅՈՒՆ

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ.....3

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ.....5

ԳԼՈՒԽ 1. ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ 6

1.1. Պասիվ մեթոդ.....6

1.2. Ակտիվ մեթոդ.....6

1.3. Ինտերակտիվ մեթոդներ.....7

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐ 8

ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ 9

3.1. Ուսուցման մեթոդի հասկացությունը, տեսակները 9

3.2. Համակցված դասեր, ԽԻԿ համակարգի բնութագիրը 12

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ.....15

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ 16

ՆԵՐԱԾՈՒԹՅՈՒՆ

Ուսուցման մեթոդները փոխներգործուն գործընթաց են ուսուցչի և աշակերտի միջև, ինչի արդյունքում տեղի է ունենում գիտելիքի, հմտությունների և կարողությունների փոխանցում և յուրացում նախատեսված ուսումնառության բովանդակությամբ:

Դասավանդումը շատ բարդ գործընթաց է: Պատճառն այն է, որ դասավանդումը հասարակական գործունեություն է, որն իրականանում է հատուկ կոնտեքստում և, հետևաբար, ձևավորվում է այդ հատուկ համատեքստի արժեքների համաձայն: Գործոնները, որոնք ազդում են ուսուցչի սպասելիքների վրա ներառում են պատմությունն ու ավանդույթը, կրթության նպատակի հանդեպ նրանց սոցիալական տեսակետները, ուսման վերաբերյալ ընդունված տեսությունները և այլն: Ուսուցչի կողմից պահանջվող իրավասությունների վրա ազդում են աշխարհում ուսուցչի դերը հասկանալու տարբեր եղանակները: Ընդհանուր առմամբ գոյություն ունի 4 մոդել.

- ուսուցիչը՝ որպես ուսուցման ղեկավար,
- ուսուցիչը՝ որպես հոգատար անձնավորություն,
- ուսուցիչը՝ որպես փորձառու սովորող,
- ուսուցիչը՝ որպես մշակութային և քաղաքացիական անձ:

Դասավանդման մեթոդը ներառում է ուսուցիչների կողմից օգտագործվող սկզբունքները և մեթոդները՝ խթանելու աշակերտների ուսուցման գործընթացը: Այս ռազմավարությունները կախված են մասամբ թեմայի բովանդակությունից և մասամբ սովորողի բնույթից: Որպիսի տվյալ մեթոդը լինի համապատասխան և արդյունավետ այն պետք է առնչվի սովորողի առանձնահատկությունների և ուսուցման նյութի հետ: Մեթոդների ընտրության առաջարկությունները բազմաթիվ են և դրանց ընտրությունը կատարելիս ոչ միայն պետք է հաշվի առնել առարկայի բնույթը, այլ նաև թե ինչպես են սովորում աշակերտները: Այսօրվա դպրոցի նորարարական միտումներից մեկն այն է, որ այն խրախուսում է ստեղծագործ միտքը:

Ուսուցման մոտեցումները կարող են դասակարգվել ուսուցչակենտրոն և աշակերտակենտրոն մոդելների մեջ: Ուսուցման ուսուցչակենտրոն մոտեցման մեջ ուսուցիչները գլխավոր դերում են: Սովորողները դիտվում են որպես «դատարկ անոթներ», ում հիմնական դերը պասիվ տեղեկատվություն ստանալն է, որի վերջնական նպատակն է թեստավորումը և գնահատումը: Ուսուցչի հիմնական դերն է ուսուցանել և նպաստել աշակերտի ուսուցմանն ու ընդհանուր նյութի ընկալմանը: Սովորողի ուսուցումը գնահատվում է ինչպես ֆորմալ, այնպես էլ ոչ ֆորմալ գնահատման ձևերով, ներառյալ՝ խմբային աշխատանքները, թղթապանակները և դասի մասնակցությունը:

Ուսուցումը և գնահատումը փոխկապակցված են, այսինքն դասավանդման գործընթացում ուսուցումը շարունակաբար գնահատվում է ուսուցիչների կողմից: Հաճախ օգտագործվող ուսուցողական մեթոդները կարող են ներառել դասի մասնակցություն, ցուցադրություն, ասմունք, մտապահում կամ այս բոլորի համադրությունը:

ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ԱԿՆԱՐԿ

Ավանդույթի համաձայն ուսուցման մեթոդները դասակարգվում են 3 խմբի.

1. բանավոր, տեսողական, գործնական,
2. վերարտադրողական, բացատրական-ցուցադրական, որոնողական, հետազոտական, խնդրի վրա հիմնված և այլն,
3. ինդուկտիվ և դեդուկտիվ:

Կրթական-ճանաչողական գործունեության արդյունավետությանը միտված վերահսկման մեթոդներ. գիտելիքի, հմտությունների և կարողությունների տիրապետման արդյունավետությունը որոշող բանավոր, գրավոր ստուգումներ և ինքնաստուգումներ:

Կրթական-ճանաչողական գործունեությունը խթանող մեթոդներ. որոշակի խթաններ՝ ուղղված մոտիվացիայի ձևավորմանը, պատասխանատվության զգացում ունենալուն, պարտականություններ կրելուն, շահագրգռվածությանը՝ ունենալու գիտելիք, հմտություններ և կարողություններ:

Ուսուցման պրակտիկայում գոյություն ունեն և այլ մոտեցումներ ՝դասակարգելու ուսուցման մեթոդները, որոնք հիմնված են մատուցվող նյութն ընդունելու, գիտակցականության աստիճանի վրա՝ պասսիվ, ակտիվ, ինտերակտիվ, էվրիստիկական և այլն:

ԳԼՈՒԽ 1. ՄԵԹՈԴՆԵՐԻ ԿԱՐԵՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ ՄԱՆԿԱՎԱՐԺՈՒԹՅԱՆ ՄԵՋ

1.1.Պասիվ մեթոդ

Սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը գլխավոր դերակատարն է և դասի ընթացքի ղեկավարը, իսկ սովորողները պասիվ լսողի դերում են և ենթարկվում են ուսուցչի հրահանգներին: Սովորողի և դասավանդողի կապը պասիվ ուսուցման տարբերակում պահպանվում է հարցումների, ստուգողական աշխատանքների և թեստերի միջոցով: Ժամանակակից մանկավարժական տեխնոլոգիաների և սովորողի կողմից ուսումնական նյութի յուրացման տեսանկյունից՝ ուսուցման պասիվ մեթոդը համարվում է ամենից անարդյունավետը, բայց ունի նաև մի շարք առավելություններ: Այն ուսուցչից պահանջում է թեթև նախապատրաստական աշխատանք դասին և տալիս է համեմատաբար մեծ ծավալով ուսումնական նյութի մատուցման հնարավորություն դասի սահմանափակ ժամանակահատվածում: Հաշվի առնելով այս առավելությունները՝ շատ դասավանդողներ պասիվ մեթոդը նախընտրում են այլ մեթոդներից: Հարկ է նշել, որ որոշ դեպքերում այս մոտեցումը իրեն արդարացնում է փորձառու մասնագետի պարագայում, հատկապես, երբ սովորողներն ունենում են հստակ նպատակ՝ ուղղորդված առարկայի մանրակրկիտ ուսումնասիրմանը[1]:

1.2. Ակտիվ մեթոդ

Սովորողի և դասավանդողի փոխադարձ գործունեության ձև, որտեղ դասավանդողը և սովորողը փոխազդում են միմյանց վրա կրթական գործունեության ընթացքում, և սովորողներն այստեղ ոչ թե պասիվ ունկնդիրներ են, այլ դասի ակտիվ մասնակիցներ: Եթե պասիվ ուսուցման դեպքում գլխավոր դերակատարը և հիմնական հրահանգավորողը դասավանդողն է, ապա այստեղ սովորողն ու դասավանդողը հավասար իրավունքների դաշտում են: Շատերը հավասարության նշան են դնում

[1] Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983. — 244с.

ակտիվ և ինտերակտիվ մեթոդների միջև, սակայն, չնայած իրենց ընդհանրությանը, այս մեթոդներն ունեն նաև տարբերություններ։ Ինտերակտիվ մեթոդները կարելի է համարել ակտիվ մեթոդների առավել ժամանակակից ձևեր[2]։

1.3. Ինտերակտիվ մեթոդներ

Ինտերակտիվ մեթոդ նշանակում է փոխներգործել, գտնվել ինչ-որ մեկի հետ երկխոսության մեջ, այլ կերպ ասած, եթե ակտիվ մեթոդների դեպքում փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում սովորողները և դասավանդողը, ապա ինտերակտիվ մեթոդների դեպքում սովորողները փոխադարձաբար ակտիվ գործունեության մեջ են գտնվում նաև միմյանց հետ, և ուսուցման պրոցեսում գերակայում է սովորողների դերը։ Ինտերակտիվ ուսուցման ժամանակ դասավանդողն առաջատար դերում չէ. նրա դերը կրթական գործունեությունը դեպի դասի նպատակի իրականացում ուղղորդելն է։ Ինտերակտիվ դասերի հիմնական բաղադրիչներն են ինտերակտիվ վարժությունները և առաջադրանքները, որոնք կատարվում են սովորողների կողմից։ Ինտերակտիվ վարժությունների և սովորական հանձնարարությունների տարբերությունն այն է, որ կատարելով դրանք՝ սովորողը ոչ միայն և ոչ այնքան ամրապնդում է արդեն յուրացված նյութը, որքան ուսումնասիրում, յուրացնում է նոր նյութը։

[2] Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 1996. — 544 с.

ԳԼՈՒԽ 2. ԴԱՍԻ ԱՐԴՅՈՒՆԱՎԵՏ ՄԵԹՈԴՆԵՐ

Պատմության նկատմամբ աշակերտների հետաքրքրությունները զարգացնելու համար կարևոր նշանակություն ունի ուսուցչի աշխատանքը սկզբնաղբյուրների հետ: Սկզբնաղբյուրներ են համարվում պատմական նամակները, լուսանկարները, թերթային կամ գիտական հոդվածները, պատմական փաստաթղթերը: Սկզբնաղբյուրների հետ աշխատանքը կարևոր միջոց է դասագրքերին այլընտրանք ունենալու, դրանց լրացնելու իմաստով:

2. Պատմության դասաժամին նպատակահարմար է կատարել նաև խմբային աշխատանք՝ ելնելով թեմայից ու պատմական դեպքերից: Դասարանը բաժանել 4 հոգանոց խմբերի և բաժանել թերթիկներ, որոնց վրա գրված են հարցեր՝ ելնելով ուսումնասիրվող պատմական դեպքերից:

3. Խմբերի հետ կարելի է կազմակերպել դերային խաղ: Մասնակիցները կարող են ներկայացնել պատմական տարբեր դերեր:

4. Համակարգչի կիրառում: Համակարգիչով ցույց է տրվում և դասի վերաբերյալ նկարներ, և պատմության տարեթվեր: Կարևոր է նաև համակարգիչով պատմության դասի վերաբերյալ որևէ ֆիլմի դիտումը:

5. Պատմության դասի յուրացման համար կարևոր է օգտագործել ուսուցչի կողմից կազմված թեստային առաջադրանքները:

6. Դասապրոցեսից դուրս ուսուցման ակտիվ մեթոդներ կարող են լինել մրցույց վիկտորինաները, միջոցառումները, էքսկուրսիաները և արշավները Հայաստանի պատմական վայրերով:

ԳԼՈՒԽ 3. ՈՒՍՈՒՑՄԱՆ ՄԵԹՈԴՆԵՐ ԵՎ ՀՆԱՐՆԵՐ

3.1. Ուսուցման մեթոդի հասկացությունը, տեսակները

Ուսուցման մեթոդ հասկացությունը իր մեջ ներառում է 3 խնդիր՝ ինչ սովորեցնել, ինչու՞ սովորեցնել և ինչպե՞ս սովորեցնել: Կրթության բովանդակությունը մատուցելու և կրթության նպատակներն իրականացնելու համար անհրաժեշտ է կիրառել որոշակի մեթոդներ, եղանակներ, ձևեր, հնարներ: Կան մի շարք գործոններ, որոնք ազդում են մեթոդների ընտրության վրա.

- ուսուցման նպատակները, խնդիրները, բովանդակությունը,
- ոսուցման նյութի քանակը և բարդությունը,
- սովորողների պատրաստվածության մակարդակը,
- ուսուցման կազմակերպման պայմանները,
- սովորողների տարիքային և անհատական առանձնահատկությունները,
- ուսուցչի պատրաստվածության մակարդակը:

Համագործակցային լեզվուսուցման մեթոդներ

Փոխներգործուն մեթոդները պետք է կիրառել ուսուցման գործընթացի այն հատվածում, երբ անհրաժեշտ է զարգացնել սովորողի մտածողությունը, ճանաչողական ակտիվությունը, հաղորդակցական կարողությունը: Փոխներգործուն մեթոդներով ուսուցումը հնարավորություն է տալիս դասապրոցեսի ընթացքում մասնակցելու ողջ դասարանին, քանի որ ուսուցչի կողմից չի մատուցվում պատրաստի գիտելիքները, այլ հնարավորություն է տրվում սովորողներին ակտիվացնել իրենց գիտելիքները, հիշողությունը:

ԳՈՒՍ (գիտեմ-ուզում եմ սովորել-սովորել եմ)

ԳՈՒՍ մեթոդը երեք սյունյակից բաղկացած մի աղյուսակ է և կարդալու ընթացքում կարող է դառնալ սովորողի ուղեցույցը:

Այս մեթոդի քայլերը.

1.ֆլխավոր թեման գրել ԳՈՒՍ աղյուսակի վերևում: Սովորողներին հարցնել, թե ինչ գիտեն դասի թեմյի մասին և ասածները գրի առնել աղյուսակի առաջին սյունակի մեջ:

2.Սովորողներին հարցնել, թե թեմայի հետ կապված ինչ հարցեր ունեն, և գրանցել դրանք աղյուսակի երկրորդ սյունակի մեջ:

3.Հանձնարարել կարդալ ընտրված հատվածը և գտնել այն մասերը, որոնք պատասխանում են կազմած հարցերին:

4.Կարդալն ավարտելուց հետո լրացնել երրորդ սյունյակը:

Խճանկար

Այս մեթոդը կարելի է կիրառել տարբեր ձևերով.

- Առաջադրանքի միջոցով աշակերտները կարող են դասագրքի տրված գլխից տարբեր հատվածներ կարդալ, նույն թեմայի վերաբերյալ տարբեր կարճ պատմվածքներ կամ նույն հեղինակից այլ պատմվաքներ:
- Հանձնարարված թեմայի սահմաններում կարող են հետազոտել տեքստի բառապաշարը, հիմնական գաղափարը, քերականությունը, ոճը և այլն:
- Սովորողները կարող են խճանկարը կիրառել առանց հետազոտությունների նախագծեր իրագործելիս:

Պրիզմա

Այս մեթոդը կիրառվում է դասի սկզբնական փուլում, կապ հաստատելով սովորողների ունեցած գիտելիքների, պատկերացումների և ուսուցանվող նյութի միջև: Պրիզմայի կատարման ընթացքը.

1.Տրվում է մեկնաբառը՝ այն հիմնական հասկացությունը, որն ուսումնասիվելու է:

2. Գծապատկերի մյուս 2 վանդակներում առանց քննարկման լրացվում են սկզբնաբառի հետ ասոցացվող առաջին երկու պատահական բառերը, այնուհետև լրացվում են նախորդ երկու բառերին ասոցացվող բառեր:

3. Պրիզման եզրափակվում է վերջնաբառով:

4. Պրիզմայի ամփոփիչ քայլը սկզբնաբառի և վերջնաբառի միջև տրամաբանական կապ գտնելն է:

Կիրառվում է պրիզմայի մեկ այլ տեսակ, որտեղ ուսուցչի կողմից լրացվում է սկզմնաբառն ու վերջնաբառը, որից հետո աշակերտները լրացնում են բաց թողնված վանդակները[3]:

Վենի դիագրամ

Վենի դիագրամը կառուցվում է երկու կամ ավելի շրջանաձև պատկերների միջոցով: Այս դիագրամը կարելի է օգտագործել գաղափարների կամ թեմաների ընդհանրությունները ցույց տալու կամ միմյանց հակադրելու նպատակով:

Т-աձև աղյուսակ

Այս աղյուսակը կիրառվում է միևնույն հասկացության, խնդրի 2 կողմերը համեմատելու համար: Այն կազմված է 2 բաժնից, որտեղ լրացվում են միևնույն հասկացության, խնդրի հակադիր որակները, դրական կամ բացասական կողմերը:

Ձնագնդի

Այն սովորողների կարծիքների փոխանակման, ընտրության, դրանց հավաքագրման և խմբի գաղափարների ամբողջությունն է: Արդյունավետ է կիրառել փոքր՝ 2-4 հոգանոց խմբերով: Ընթացքը.

1. Սովորողներին ներկայացնել որևէ պատմություն կամ առաջադրանք:
2. Անհատական առաջադրանք, ի՞նչ միտք է ծագում առաջին հերթին: Գրել կարիքների կամ գաղափարների ցանկ այդ պատմության կամ առաջադրանքի վերաբերյալ:
3. Կազմել զույգեր և միմյանց ներկայացնել անձնական կարծիքները, այնուհետև միասին ձևաբերպել երկուսի համար ընդհանուր 3-5 կարծիք, որոնք կընտրվեն անհատական կարծիքների ցանկից: Գրել դրանք թղթի վրա:
4. Կազմել չորս հոգանոց խմբեր, ներկայացնել զույգերով կազմած կարծիքները և նորից ձևակերպել 4 ընդհանուր կարծիքներ ամբողջ խմբի համար:
5. Երկուական չորս հոգանոց խմբերը միանան և կազմեն ութ հոգանոց մեծ խմբեր: Խմբերը ներկայացնեն իրենց կարծիքները, պրզեն նմանություններն ու տարբերությունները:

[3] Стулкин А.М. Методы активного обучения., М., 1991.

6. Խմբերի ձևակերպած բոլոր կարծիքները ներկայացնել դասարանին[4]:

3.2. Համակցված դասեր, ԽԻԿ համակարգի բնութագիրը

Համակցված դասերը թույլ են տալիս 1 դասաժամի ընթացքում լուծել միաժամանակ մի քանի դիդակտիկական խնդիրներ, մասնավորապես, գիտելիքների ստուգում, նոր նյութի հաղորդում, ուսուցվող նյութի շուրջ որոշակի աշխատանքների կազմակերպում և այլն:

Դասի կառուցվածքը.

- կազմակերպչական հատված
- ուսուցողական-կրնկողական աշխատանքներ անցած նյութի վերաբերյալ
- նոր նյութի հաղորդում
- նոր նյութի իմաստավորման և յուրացման շուրջ տարվող աշխատանքներ
- ուսուցվող նյութի բովանդակության ամրապնդման շուրջ կազմակերպվող աշխատանքներ
- ունեցած գիտելիքները կիրառելու և դրանք կարողությունների վերածելու նպատակով տարվող աշխատանքներ
- տնային աշխատանքների հանձնարարումը:

Դասի այս տեսակը իր ճկուն կառուցվածքով շնորհիվ ամենահաճախն է կիրառվում դպրոցներում

ԽԻԿ համակարգ

Ժամանակակից կրթակարգի մեջ տեղ գտած բազմաթիվ մեթոդների մեջ իր անփոխարինելի տեղն ունի ԽԻԿ համակարգը, որը հստակորեն լուսաբանում է ողջ դասապրոցեսի անցկացման արդյունավետ աստիճանը: Այն իր մեջ ներառում է իրար հետ սերտորեն կապված երեք փուլեր՝ խթանում, իմաստավորում, կշռադատում: Խթանման փուլի հիմնական առանձնահատկություններից են.

[4] Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.

1. Նախապատրաստել սովորողներին նոր դասի ընկալմանը. Դա կարելի է կատարել նախորդ դասի հարցման, ամփոփման միջոցով, հատկապես, երբ նոր դասը հնի շարունակությունն է:

2. Բացահայտել նոր նյութի վերաբերյալ սովորողների գիտելիքները:

3. Ակտիվացնել աշակերտներին՝ ներգրավելով նրանց քննարկվելիք նյութի մեջ:

4. Աշակերտների մոտ ձևավորել գիտելիքներ և հմտություններ ձեռք բերելու ձգտում:

Դասի նախապատրաստական մասը պետք է սկսել կազմակերպչական հարցերի լուծումով, տնային աշխատանքների վերաբերյալ անհրաժեշտ պարզաբանումներով, նոր դասի թեման և նպատակը հաղորդելով: Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել խթանման փուլում՝

1. մտագրոհ

2. խմբավորում

3. պրիզմա

4. մտածի՛ր, զույգ կազմի՛ր, քննարկի՛ր

5. 5 րոպեանոց ազատ շարադրանք

6. ԳՈՒՍ աղյուսակի I և II սյունակները

7. ուղղորդված ընթերցանության առաջին քայլը:

Իմաստի ընկալման փուլի հիմնական նպատակներից են՝

1. սովորողների մոտ հետաքրքրության աճի պահպանումը

2. տեղեկատվության ընկալման ինքնավերահսկման ապահովումը

3. նոր և հին տեղեկատվության շաղկապումը և իմացության նոր կառույցի ստողծումը

Մեթոդները, որոնք հարմար են կիրառել իմաստի ընկալման փուլում.

1. T-աձև աղյուսակ

2. գաղափարների քարտեզագրում

3. Վենի դիագրամ

4. փոխգործուն նշանների համակարգ

5. բանավեճ

6. զրույց

7. Խճանկար

Կշռադատման փուլի նպատակներից են՝

1) սովորողները նոր ստացած տեղեկատվությունը կարողանան արտահայտել իրենց բառերով և ձևակերպումներով

2) նոր գիտելիքների միաձուլում ունեցածին և դրանց աստիճանական ինտեգրացում

Մեթոդներ, որոնք հարմար են կիրառել կշռադատման փուլում.

1. քառաբաժան

2. խորանարդում

3. 3 բանալի, 1 կողպեք

Բոլոր փուլերի համար էլ գոյություն ունեցող մեթոդները բազմաթիվ ու բազմազան են, որոնցից որոշներն են, որոնք նկարագրվեցին և առաջարկվեցին կիրառել դասի որոշակի փուլերի համար: Ընտրությունը կախված է դասավանդվող առարկայից, դասի նպատակից, տրամադրված ժամանակից: Այս մեթոդներից շատերը կարող են կիրառվել 1 դասաժամի ընթացքում, սակայն որոշները կարելի է երկարացնել՝ հանձնարարելով տնային աշխատանք: Դասի պլանը գրելիս պետք է առանձնահատուկ ուշադրություն դարձնել ժամաբաշխման վրա, որի ճիշտ բաշխումը և նրան հետևելը ամբողջ պլանավորած գործընթացի իրականացման և բարձր արդյունավետության երաշխիքն է:

Այսպիսով՝ ինչ է ԽԻԿ-ը.

Խթանում - Ինչպես է պետք ուղղորդել աշակերտներին ուսումնական հարցերն ու նպատակները ձևավորելու համար:

Իմաստավորում - Ինչպես պետք է աշակերտները հետազոտեն նյութի բովանդակությունը

Կշռադատում - Ինչպես պետք է աշակերտները օգտագործեն դասի ընթացքում յուրացրած նյութը:

ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ

Որպես ամփոփում կարելի է փաստել, որ յուրաքանչյուր դասի պլանավորում ենթադրում է ստեղծագործ և լուրջ աշխատանք, որի արդյունքում ուսուցիչը գտնում և մշակում է այն ձևերն ու հնարները, որոնք տանում են դեպի դասի նպատակների իրականացում: Համաշխարհային արդի զարգացումներն իրենց անմիջական ներգործությունն ունեն կրթական համակարգի՝ առաջադրելով տարատեսակ խնդիրներ և փոփոխություններ:

Կրթության բնագավառի փոփոխությունները ենթադրում են ուսուցման նոր մոտեցումների և մեթոդների ներդրում, որոնք նպատակ ունեն սովորողների մեջ ձևավորել ուսման նկատմամբ դրական վերաբերմունք և ապահովում են սովորողների ակտիվ մասնակցությունն ուսումնական գործընթացին:

Եթե նախկինում ուսուցման ընթացքում շեշտը դրվում էր գիտելիքների յուրացման և պարզ վերարտադրության վրա, ապա այսօր առավել կարևորվում է գիտելիքի մշակման, յուրացման և կիրառման գործնական հմտությունների ձեռքբերման կարողությունների զարգացումը:

Ներկայացվելիք մեթոդների և մոտեցումների հիմքում ընկած է աշակերտակենտրոն ուսուցումը, որտեղ գիտելիքները, կարողություններն ու հմտությունները ձեռք են բերվում սովորողների անմիջական ակտիվ մասնակցությամբ, իսկ ուսուցիչը կազմակերպում և ուղղորդում է այդ գործընթացը: Նոր մոտեցումներն առաջնորդվում են մի կարևոր սկզբունքով՝ սովորել կատարելով, սովորել սովորեցնելով: Ուսուցման գործընթացի արդյունավետ կազմակերպման մեջ խիստ կարևոր նշանակություն ունի մեթոդների ճիշտ ընտրությունը և դասի ճիշտ պլանավորումը:

Դժվար է պատկերացնել որակյալ դասավանդում առանց ժամանակակից մանկավարժության տեխնոլոգիաների և մեթոդների իմացության, դասերի պլանավորման և վարման ընթացքում դրանց նպատակային կիրառմամբ: Այս իմաստով դասի պլանավորումը դառնում է ուսուցիչների մասնագիտական հմտությունների բացահայտման փորձաքար, իսկ դրա ուսուցումը՝ ուսուցիչների վերապատրաստման դասընթացների կարևոր բաժիններից մեկը:

ՕԳՏԱԳՈՐԾՎԱԾ ԳՐԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՑԱՆԿ

1. Ղևոնդյան Հ. Պատմության դասավանդման մեթոդիկա, Երևան, 2001թ.
2. Гузеев В.В. Методы и организационные формы обучения., М., 2001.
3. Алехин А.Ю. Общие методы обучения в школе. — К.: Радянська школа, 1983. — 244с.
4. Балаев А.А. Активные методы обучения. М., 2006.
5. Давыдов В. В. Теория развивающего обучения. — М.: ИНТОР, 1996. — 544 с.
6. Стулкин А.М. Методы активного обучения., М., 1991.